կանանց մասին, որոնք հավատքի հերոսներ էին: Կարդա նաև այս մարդկանց ասածները Աստվածաշնչի մասին: Բայց հետեւիր, որ նույնիսկ այս լավ գրքերը չեն կարող փոխարինել Գրքֆին, քանի որ Աստվածաշունչը առաջին տեղումն է:

Մի սիրո Նամակ

Իր ծննդյան տարեդարձի առթիւ, իշխանուհին մի կլոր կապոց ստացավ իր նշանածից:

Նա այն բացեց ու մեջը գտավ...մի հրանոթի գունդ: Նա հիասթափված ու ջղայնացած այն շրջապատեց սենյակի անկյունը: Սակայն ի՞նչ պատահեց: Գնդի արտաքին շերտը պատուվեց ու այնտեղից դուրս եկավ մի արծաթյա գունդ: Իշխանուհին, անմիջապես վերցրեց այն ու իր ձեռքերի մեջ դարձրեց ու սեղմեց...արծաթյա գնդի միջիցից դուրս եկավ մի ոսկյա արկղիկ: Նա բացեց այն ու այնտեղ գտավ սև թավիշի վրա

տեղավորված ադամանդներով պլպլացող մի թանկագին մատանի: Կար նաեւ մի փոքրիկ նամակ գրված՝ «Որովհետեւ սիրում եմ քեզ»:

Այս ձեռով են մտածում շատ մարդիկ՝ «մենք չենք սիրում Աստվածաշունչը, այնտեղ գրված շատ բաներ տարօրինակ են հնչում եւ մեզ համար դժվար է հասկանալ»: Սակայն նրանք, ովքեր իսկապես ուզում են այն ուսումնասիրել եւ փրկությունում են, պիտի գտնեն նոր գեղեցկություններ եւ ի վերջո անսխալորեն պիտի հասկանան Աստվածաշնչի սրբազան պատգամը՝

Որովհետեւ ես սիրում եմ քեզ

Լավագույն ապացույցը

Մի կամրջի մոտ, իր մրգավաճառի կրպակում նստած էր մի կին: Երբ հաճախորդ չէր լինում, նա կարդում էր, իր համար շատ թանկագին՝ Աստվածաշունչը: «Այդ ի՞նչ տեսակ գիրք էք կարդում անընդհատ», հարցրեց մի հաճախորդ: «Ո՛հ, պարոն,» պատասխանեց նա, «Սա Աստվածաշունչն է, Աստծո Խոսքը»: «Լավ, որտեղի՞ց գիտեք, որ դա Աստծո Խոսքն է. Զ.գ ո՞վ ստեց այդ մասին»:

«Նա Ինքը»:

«Աստված քեզ հետ անձնապես խոսե՞ց»:





Սկզբում, երբ հարցվեց քացառ-
րեւի բն ինչու Աստվածաշունչը
Աստծո խոսքն է, նա մի տեսակ
շփոթվեց: Բայց հետո, նայեց
երկինք ու մատնացույց անելով
արեւը ասաց. «Պարոն, դուք կա-
րո՞ղ եք ինձ ասացուցել, որ դա
արեւն է»: «Ապացուցել ձեզ, որ
դա Արեւն», ասաց համախորդը,
«շատ պարզ է: Լավագույն ասա-
ցույցն այն է, որ այն լույս է
տալիս ու ջերմացնում ինձ»:

«Դա նիշտ է»,
ծաշնչի իսկապես
նշելու ասացույցը
Այն ինձ ներքին
ջերմութունն»:

ասաց կինը, «Աստվա-
Աստծո խոսքը լի-
նրանումն է, որ
լույս է տալիս ու

Աստվածաշնչում ոչ մի հակասություն

Գիտությունների, հնագիտության ու ֆիզիկայի, երկրաբանության ու աստղագիտության եզրակացությունները հակասութեան մեջ չեն Աստվածաշնչի հետ:

Կարո՞ղ էր այլ կերպ լինել:


Նա, ով ստեղծեց տիեզերքը ու ձևավորեց իմաստությունը, կարո՞ղ էր հակասել ինքնիրեն:

Աստվածաշունչը 'ատարյալ է:

Այն մաքուր ոսկով չի ոսկեզոծված, ոչ էլ քանկագին ֆարերով զարդարված: Այսպիսով, Աստվածաշնչում չկա մի բան, որը կարիք ունենա զարգանալու: Դու արելը տեսնելու համար մոմ վառելու անհրաժեշտությունը չունես: Նույնպես անհրաժեշտությունը չկա, որ արելը ապացուցի, որ արելն է:

Այսպես է Աստվածաշնչի հետ: Այն Աստծո կնիքն է կրում:

Աստվածաշունչը պատի մեջ



Մոտավորապես 200 տարի առաջ, մախֆան Սեմտ Գոթարդի սունելի կառուցումը, Իտալիայից Շվեցարիա, կամ հակառակ ուղղությամբ գնացող բոլոր մամփորդները, պետք էր ֆայլելով անցնեին Սեմտ Գոթարդի լեռնացի: Սա բավականին երկար ժամանակ էր պահանջում:

Այդ ժամանակներում, ժողովուրդը մամփորդում էր խրմբերով: Մի անգամ որմնադիրների մի խումբ մոտակա Լուգանոյից մամփորդում էր դեպի Շվեյցուրիայի կենտրոնական մասը, որովհետև այնտեղ կարող էին ավելի լավ վարձատրվել: Դրանց մեջ կար Անտոնիո անունով մի երիտասարդ, որը գրույցի բռնվեց մի տարիքոտ կնոջ հետ և վերջինը նրան պատմեց Տեր Հիսուսի մասին: Անտոնիոն չուզեց որեւէ բան լսել և ասեց. «Մե՞նք ունե՞նք Մարիամը և ֆահանաները: Դա մե՞զ բավական է»:

Ապա, տիկինը նրան առաջարկեց, որպես մվեր ընդունել մի գեղեցիկ, կաշեկազմ Աստվածաշունչ: Նա այն վերցրեց, բայց երբեք չկարդաց:

Հասնելով Գլարուսի շինարարական տեղամասը, նա աշխատանքի նշանակվեց մի մեծ տան կառուցմանը օգնելու: Աշխատանքի ընթացքում, ինչպես իր բոլոր ընկերները, նա սկսեց հայտնել ու անիծել: Մի պատի ծածկույթը անելիս, նա նկատեց մի ծակ, որը անհրաժեշտ էր աղյուսով ծածկել: Հանկարծակի մտածեց Աստվածաշունչի մասին, որը իր պայուսակումն էր, և իր աշխատակիցներին ասեց. «Տղա-

նե՛ր, ես մի գաղափար ունեմ: Նայե՛ք այս Աստվածաշըն-
չին: Ես այն պետք է դնեմ այս ծակի մեջ»:

Աստվածաշունչը դժվարությամբ տեղավորվեց այնտեղ եւ
կազմը որոշ չափով վնասվեց: «Այստեղ մայե՛ք, երեսից մի
ֆիչ շաղախ», ասեց Անտոնիոն, «հիմա կուզեմայի տեսնել,
թե Դեւը պիտի կարողանա՞ Աստվածաշունչը այնտեղից հա-
նել»:

Մի քանի շաբաթ հետո, Անտոնիոն, նորից լեռների վրայով,
գնաց տուն: 1861 թվականի Մայիսի 10-ին, մի մեծ հրդեհ
ավերեց Գլարուս քաղաքը: Ավերվել էին 490 շենքեր: Ամ-
բողջ քաղաքը ավերակների մեջ էր, սակայն այն պետք էր
վերակառուցվեր:

Հյուսիսային Իտալիայից Յոհաննես անունով մի աղ-
յուսաշար բրիգադիրին հանձնարարվեց ուսումնասիրել մի
տուն, որը մասնակի ավերված էր: Նա իր մուրճով խփում էր
դեռ կանգուն պատերին եւ հանկարծ մի կտոր ծեփ կտորվեց:
Ջարմանով գտավ մի գիրք, որը սեղմված էր պատի մեջ:
Այն դուրս հանեց...մի Աստվածաշունչ...ինչպե՞ս այն մտավ
այնտեղ, ի՞նչ տարօրինակ է: Իր ազատ ժամերին, Յոհան-
նես, ջանասերորեն սկսեց կարդալ Աստվածաշունչը: Նա շատ
բաներ չէր հասկանում, բայց Ավետարաններից ու Սաղմոս-
ներից աղոթել սովորեց:

Ծթե մեկը ազնիվ է, Աստված պիտի օգնի նրան: Իրեն
համար երկար չտեսեց հասկանալու, որ ինքը մեղավոր է, որ
Աստված սիրում է իրեն, եւ Տեր Հիսուսին հավատալու մի-
ջոցով կարող է մեղքերի թողություն ստանալ: Աշնանը, երբ
նա վերադարձավ իր տունը եւ ընտանիքը, նա ամենուրեք
պատմեց իր փրկության բարի լուրերը:

Իր ազատ ժամանակին, մի մամպրուկ լցնում էր Աստ-
վածաշնչերով ու շրջում մոտակա գյուղերը, տարածելու
«Բարի Լուրերը»:

Նա եղաւ նաեւ այն կողմերը, որտեղ Անտոնիոն էր ապ-
րում: Մի տոնավաճառում նա դրեց իր Աստվածաշնչերի

կրպակը: Անտոնին, այնտեղից անցնելիս, կանգնեց ու գոչեց, «Օ՛ր Աստվածաշնչե՛ր, ես դրանց կարիքը չունեմ: Եթէ ունենայի, կզնայի Գլարուս, որտեղ մեկը դրել էի պատի մեջ: Ես կգարմանայի, եթե Դեւիմ յաջողվեք այն դուրս հանել այնտեղից»:

Յոհաննեսը լրջորեն նայեց այդ երիտասարդին: Ամեն ինչ անմիջապես պարզ էր. եւ նրան ասաց. «Զգուշ եղիր երիտասարդ, մի ծաղրիր: Ի՞նչ պիտի ասես, եթե ես քեզ ցույց տամ հենց նույն Աստվածաշունչը»:

«Դրան ես չեմ հավատում». ասաց Անտոնին, «Ես այն անմիջապես կնանայեի, որովհետեւ վրան նշան էի արել: Ես նորից եմ կրկնում, նույնիսկ Սատանան չէր կարող այն հանել պատից»:

Յոհաննեսը դուրս բերեց Աստվածաշունչը եւ ասաց. «Ճանաչո՞ւմ ես նշանը, բարեկամս»: Անտոնին, երբ տեսավ վնասված Աստվածաշունչը, սկսքում լեզուն կապվեց:

«Տեսնո՞ւմ ես, սա Սատանայի գործը չէ, այլ Աստծո: Աստված այն արեց, որպեսզի քեզ ցույց տա, որ ինքը կապրի: Նա նույնպես ուզում է քեզ փրկել»:

Անտոնին նորից դրսևորեց Աստծո դեմ ունեցած հին ատելութունը: Խղճի խայթ գգալով հաղերձ նա գոռաց. «Ապա, տղանե՛ր, այս մարդու ու Աստվածաշնչի այս հեզ կրպակի հետ գործերը մաքրեմք»:

Մի քանի վայրկյանում, կրպակը շրջված էր, Յոհաննեսը ծծոված իսկ հանցագործները ցրվել ժողովրդի մեջ:

Այն օրվանից սկսած, Անտոնին Աստծո նկատմամբ ավելի չարակամ դառնավ: Մի օր, նորից հարբած, աշխատանքի ժամանակ, 56 ոտնաչափ բարձրությամբ ունեցող շինարարական լաստից ցած ընկավ, ծանր վնասվածքով շտապ հիվանդանոց հասցվեց:

Երբ, այդ մասին լսեց Յոհաննեսը, նա մի գեղեցիկ ծաղկեփունջ ուղարկեց եւ անձամբ այցելեց նրան: Սակայն Անտոնինի սիրտը մնում էր կարծր ապառաժի մտան: Թեպետ նա ազդվել էր Յոհաննեսի իր հանդեպ տածած սիրուց: Յոհաննեսը նրան այցելեց ամեն շաբաթ եւ Անտոնին սկսեց

աստիճանաբար կարդալ Աստվածաշունչը: Սկզբում նա այդ անում էր, որովհետև զբաղվելու այլ բան չունեիր: Սակայն շուտով նրա հետաքրքրությունը արթնացավ:

Մի անգամ նա Եբրայեցիս 12 գլխում կարդաց. «Որդայկ, Տիրոջ խրատը մի անարգեիր»:

Այս լրիվ հարմարվում էր իր պարագային: Անտոնինոն շարունակեց ընթերցանությունը եւ Աստծո Խոսքը, որ կարող է ժայռեր չախչախել, նույնպես սկսեց հասնել իր սրտին: Նա սովորեց ճանաչել իր հանցանքը եւ խոտովանել Աստծո առաջ: Սակայն նա նույնպես սովորեց վստահել խաչի վրա ավարտված գործին: Իր հոգին բուժված էր, սակայն ֆիզիքային նա հաշմանդամ էր դարձել: Նա այլեւս որպես աղյուսաշար չէր կարող աշխատել, բայց գտավ հարմար մի աշխատանք: Հետագայում նա երջանիկ ամուսնություն կնքեց Յոհաննեսի աղջկա հետ: Իր անբերը, միաժամանակ, իր լավագույն բարեկամն էր: Անտոնինոն հիմա դրախտում է: Աստվածաշունչը, որ նա մի ժամանակ դրել էր պատի մեջ, իր որդիների կողմից գնահատվեց որպես անգնահատելի գանձ:

Աստվածաշունչը հացի նկանակի մեջ (քուկու) մեջ

Ջո Հուս-ին կարելի է անվանել Բոհեմիայի մարգարեն ու բարեկարգողը, սակայն նաև նահատակը: Իր հստակ վկայութեանց միջոցով հազարավորների աչքերը բացվեցին. Քրիստոսի ավարտած գործի մասին սխալ ուսմունքների նկատմամբ: Սակայն, Ավետարանի այս հանրային հրապարակումները, այս երկրում. երկար չտևեցին: Ջոն Հուսը վառվեց խարույկի վրա ու շատ Քրիստոնյաներ սպանվեցին: Ամեն կողմ Աստվածաշունչեր էին փնտռում, դրանք ոչնչացնելու համար:

Աստծո Խոսքը սիրող մի կին, հաց եփելու համար, կանգնած էր փոխ առաջ, երբ լսեց, որ Ինֆլիգիցիայի մարդիկ եկել են իրենց գյուղ բանտարկելու համար նրանց, ովքեր Աստվածաշունչ ունեն, նա անմիջապես վերցրեց իր Աստվածաշունչը եւ այն փաթաթեց խմորի գնդով ու այն դրեց փոխ մեջ, այնտեղ դնելով նաև մնացած խմորե նկանակները:

Կարն ժամանակ անց, նրա տունը խուզարկվում է հատակից մինչև կտուրը սակայն ոչինչ չի գտնվում:

Երբ, Ինֆլիգատորները հեռանում են տնից, հացերը արդեն եփել էին ու դուրս բերվեցին փոխից,

դրանց հետ նաեւ Աստվածաշունչը պարունակող հացը:

Ինչ գարմա՛նք: Աստվածաշունչը անվնաս էր մնացել, ինչպես Սեդրակ, Միսաֆ, եւ Հարեդ-նակով, որ Նաբուֆոտնոսորի կողմից բոցավառ փռուց էին նետվել ու այնտեղից անվնաս դուրս եկել: Այս անվախ կնոջ սերունդները այս Աստվածաշունչը պահել են որպես մի թանկագին ժառանգական մասունք: Վերջին ժառանգորդը՝ Շեբալդ անունով մի հողագործ, ծնունդով նույնպես Բոհեմացի, ապրում էր Օհայոյում, եւ Աստվածաշունչը շատ թանկ էր գնահատում:

Գնդակով ծածկված Աստվածաշունչը

«Աստվածաշնչի միջով գնդակ կրակելը, դա ամոթ է», ասաց մեկը. «Ոչ ոք այդպես չպետք է անի»:

«Սակայն, ես կածում եմ սա հրաշալի է», ասաց մի զինվոր, «այն իմ կյանքը փրկեց: Ես ռազմաճակատում էի եւ մեզ անհրաժեշտ էր սողալ խրամատից-խրամատ, երբ այդ անելիս, հանկարծ ուժեղ մի հարված զգացի կրծքիս վրա, մի ծակող ցավի հետ միասին: Ի՞նչ պատահեց:

Ըստ սովորութեան, ես իմ գրպանի Աստվածաշունչն տանում էի ինձ հետ: Եթե Աստվածաշունչը չլիներ, թշնամու գնդակը պետք է սրտիս հասներ: Այժմ, ես մի թեթեւ վերբով, որի բուժումը երկար չի տեւի, փրկվեցի: Ես

ընդունում եմ, որ սա Աստծո ողորմածութիւնն է:

Գնդակով ծակված այս Աստվածաշունչը, իմ կյանքը փրկել է երկու անգամ: Առաջինը՝ երբ այն ցույց տվեց դեպի Փրկիչը տանող մանապարհը, եւ երկրորդը՝ երբ այն կանգնեցրեց մահացու գնդակը:

Ծաղրված Աստվածաշունչը



Տիկին Լիննեբրի համար սկսել էին ծանր ժամանակներ: Իր ամուսնու մահից հետո սկսեցին ֆինանսական դժվարութիւնները: Նա հարկադրված էր վաճառելու իր լավ կահույքի մի մասը եւ գոհարեղեններ, մի հնութիւնների առևտրականին: Մի օր, նա ծախեց նույնիսկ իր գեղեցիկ կազմված եւ ժառանգական մասում գառնած Աստվածաշունչը, որը իր ծնողներից ստացել էր որպես հարսանեկան նվեր:

Անցյալներում նա ցնծում էր Աստծո Խոսքով եւ ուժ տաճում, սակայն այժմ նա ամեն պարագայի տակ, այն չէր կարդում, երբ մեծակ մնաց, մտածումն էր իրեն անհանգստացրին: Երբի շատ վատ արեց, որ այդ թանկագին գրքից այդպես հեշտութամբ բաժանվեց ու ծախեց: Այսպես, երբ ավելի վրդովվեց, եւ երեխաները պառկել էին բնելու, նա դուրս գալով տնից, գնաց հնութիւնների առևտրականի մոտ, որպեսզի ետ վերցնի Աստվածաշունչը: Խանութի պատուհանից ներս նայելով ի՞նչ է տեսնում: Չորս տղամարդիկ, կանգնած են սեղանի շուրջ եւ Լեւին՝ առևտրականը, նրանց համար ընթերցում է մի գրքից, որը նա մանաչեց որպես իր Աստվածաշունչը: Երբու՜մ էր, որ այս մարդիկ ուզում էին ամբողջ սրտով ծաղրել այս հին գրքի մեջ եղած առասպելները: Սակայն այս մարդիկ ավելի լուռ են դառնում երբ Լեւին որոշ համարներ է կարդում

Քրիստոսի տառապանքների մասին: Եվ երբ նա կարդում էր Գեթսեմանի պարտեզում եղած պալատի մասին, կարծես ինքն պիտի խոցվեր, այնքան խորը հուզվեց, որ արտասուքները վազեցին այտերն ի վար: Ընկերները, առանց նույնիսկ հրաժեշտ տալու, լուռօրով հեռացան:

Իսկ տիկին Լիմենը: Իրեն համար, դա չափից դուրս շատ էր, որ այս մարդիկ ծաղրում էին իր Աստվածաշունչը: Նա նույնպես արտասվեց: Իր սիրտը մեղադրում էր իրեն: Հիմա, նորից լսելով թե ինչպես իր փրկիչը տառապել է իր համար, նա լացելով վերադարձում է տուն, ծնրադրում ու խոստովանում իր Տիրոջ ու Փրկիչի առաջ, որ մոռացել էր իրեն:

Առավոտյան, նրան են վերադառնում ապահովությունն ու սիրտանքը, որոնք լցնում են սիրտը: Այժմ նա գիտի, որ նրա ամբողջ հանցանքը ներված է եւ նա հիմա կարող է իր կյանքը շարունակել քայլելով իր Փրկիչի կողքով: Անմիջապես գնում է Լեւիի մոտ եւ գնելու Սուրբ Գիրքը: Բայց նա խիստ զարմացած էր, Լեւիին գտնելով նույն դիրքում՝ քաց Աստվածաշունչի առաջ: Նա չէր կարողացել բաժանվել այս աստվածային գրքից: Նա շարունակում էր կարդալ Աստծո Գառան տառապանքների մասին եւ թե Տեր Հիսուս ինչպես աղոթեց Խաչին վրա՝ «Հա՛յր, ների՛ր, նրանց, որովհետեւ չգիտեմ թե ինչ են անում»:

Հիմա նա նույնպես կարդում է լավ ճանաչված՝ Ծայի ԾԳ գլուխը. «Բայց նա մեր մեղքերի համար վիրավորվեցավ, եւ մեր անօրինությունների համար ծեծվեցավ»: Լեւիին շատ խոտեց, որ Նա՛ Անմեղը մահվան ենթարկվեց, Նա, որին երեկ երեկոյան ծաղրում էր ինքը: Ապա նա գոչեց. «Ո՛վ Նազովրեցի Հիսուս, ուրեմն Դո՞ւ ես ճշմարիտ Մեսիան, Աստծո Քրիստոսը»:

Այս վիճակի մեջ է գտնում տիկին Լիմենը: Մոլորված, նա կանգնում է դռան մեջ ու Լեւին ասում է. «Ծու ձեր գրքի մեջ գանձ գտա, մի գանձ, որը ավել արժեք է քան ամբողջ աշխարհը»:

Կինը նույնպես պատմում է, որ երեկ գիշեր նա խա-

վարից տեղափոխվել էր լույս:

Տիկին Լիննեբը ետ է ստանում իր Աստվածաշունչը, իսկ Լեւին իր հաբար գնում է մի նորը: Կարն ժամանակ անց նրա կինը նույնպես, Քրիստոսի արյան միջոցով, խաղաղություն է գտնում եւ երկուսով մկրտվում են:

Այս պատմությունը պատմեց, Քրիստոսով հանգչելուց էիջ առաջ, Ստրագրուրգի հրյաների մոտ ուղարկված մի միսիոներ՝ Յակոպ Օգուստ Հաուսմեյստերը:



Լողացող

Աստվածաշունչը

Չապոնացի մի սպա, իր նավը Նագասակիի Նավահանգրստով վարելիս, նշմարում է ջրի վրա լողացող մի փոքր գիրք: Այն դուրս է բերել տալիս, ու նկատում, որ տարօրինակ տառեր է պարունակում: Այս փոքր գրքի պարունակությունը հասկանալու համար այստեղ, այնտեղ է դիմում, սակայն ապարդյուն:

Ի վերջո, մի չինացի վաճառական, որը մի էիջ անգլերեն գիտեր, կարողանում է որոշ չափով բավարարել սպայի հետաքրքրությունը, ասելով նրան որ սա «Հիսուս-Գիրք» է, օտար գավթիչների գիրքը, որի չինարեն թարգմանությունը հնարավոր է ձեռք բերել: Սպան շատ էիջ գիտեր չինարեն լեզուն, սակայն ամեն պարագայի տակ վաճառականին խնդրեց մի հատ թարգմանել: Հենց որ ստացավ չինարեն Նոր Կտակարանը, նա սկսեց եռանդով ուսումնասիրել այն, չինարեն լեզուն սովորելու համար: Այս անելիս, Սուրբ Հոգին արդեն գործում էր իր սրտում, թեպետ ինքը այդ մասին իրագրել էր: Երբ ավարտեց գրքի ընթերցումը, նա մի երջանիկ

մարդ էր, որը Տեր Հիսուսին ճանաչում էր որպես իր անձի Փրկիչը: Ճապոնական կոապաշտությունը պահպանելու համար, արգելված էր կրոնական որեւէ արարողության ներածումը:

Սակայն սպան չէր կարող լուր իր Փրկիչի մասին: Այսպիսով նա հանդիպեց իր ընտանիքի եւ մի քանի մոտիկ բարեկամների հետ, ուսումնասիրելու համար Աստվածշունչը: Շուտով, Քրիստոսի սերը սկսեց բռնկվել շատ սըրտերում:

Հետագայում, կրոնական ավելի ազատություն շնորհվեց եւ նույնիսկ մի միսիոներ տեղավորվեց Նագասակիում: Հիմա սպան կարող էր ազատ խոսել իր «Հիսուս-Գրքի» եւ Փրկիչին ունեցած հավատի մասին:

Նա, առաջիններից մեկն էր, որ Ճապոնիայում ազատորեն խոստովանեց Քրիստոսին: Նրա գործողություններն ու վարվելակերպը մի կենդանի վկայություն էին: Այս բոլորի պատճառը, Նագասակիի նավահանգստում լողացող Աստվածաշունչն էր:

Իսկապես, Ավետարանը մի ուժ ունի, որը կարող է փրկել բոլորին, ով հավատում է:

Պատուված Աստվածաշունչը

Հազարավոր, նույնիսկ միլիոնավոր մարդիկ արդեն օրհնվել են Աստվածաշնչի միջոցով: Հաճախ, Աստվածաշնչի միայն մի էջ կամ նույնիսկ մի տող, սերմի այն հատիկն է, որը հարյուրապատիկ բերք տվեց:

Գերմանական մի փոքր քաղաքում, անուրդով վաճառվում էր մի տան ունեցվածքը: Դրանց մեջ էր նաեւ մի մեծ, հին

Աստվածաշունչ, բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում դրան: Վերջնական մի մանրավաճառ այն ստացավ մի քանի մետաղադրամով:

Մանրավաճառը, այն փաթաթելու թուղթ դարձրեց, առանց մտածելու այդ թուղթն ու պոկված էջերով գրքի բարձր արժեքի մասին, նույնիսկ այսպես պատուած ու կեղտոտված վիճակում: Աստված սանց. «Իմ Խոսքը չպետք է ինձ դատարկ վերադարնա» (Նսայի ԾԵ):

Այս քաղաքում ապրում էր մի մարդ, որը անընդհատ տանջվում էր այն մտքից, որ ինքը հանցավոր է մարդասպանության մեջ: Գիշեր ցերեկ հանգիստ չէր գտնում: Համախ լսում էր «մարդասպան» բառը կամ այն տեսնում էր իր աչքերի առաջ բոցավառ տառերով:

Մի օր, նա իր որդուն ուղարկում է խանութ ինչ-որ բան գնելու, եւ մանրավաճառը այն փաթաթել էր այդ հին Աստվածաշունչից պոկված թերթիկով: Հանկարծակի Երրայեյիս Թ-ի հետեւյալ խոսքերը՝ «...Արյուն չթափված, թողություն չի լինի», մարդու աչքերի առաջն էին:

Սկզբում նա չհասկացավ այն: Նա թողություն իսկապես փնտռում էր, եւ ուզեց դրա մասին ավելի լսել: Տղան մի անգամ էլ գնաց մանրավաճառի խանութը, որը հիմա Աստվածաշունչից պատռել էր Հովհաննեսի առաջին ընդհանրական Նամակից: Երբ, իր հանցամեքի համար տանջվող այս մարդը, կարողաց նույնպես այս էջը, իր հոգու վրայից բեռը գլորվեց. ուրեմն թողություն կա, կա մաքրություն բոլոր մեղքերից. այստեղ գրված է «Նրա Որդի» Հիսուս Քրիստոսի արյունը մեզ մաքրում է բոլոր մեղքերից». ինչպես նաեւ «Եթե մեքն, մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ եւ արդար է ներելու մեզ մեր բոլոր մեղքերը, եւ մեզ մաքրելու բոլոր անարդարություններից (Ա. Հովհ. Ա. 7-10):

Այս բառերը, նրա խավար հոգու համար, լույս էին: Նա նույնպես գգաց, որ Տեր Հիսուս Քրիստոսի արյունը, որ Նա Գողգոթայի Խաչին վրա թափեց, կարող է լվալով մաքրել բոլոր մեղքերը, ովքեր Աստծո առաջ կխոստովանեն իրենց հանցամեքը: Այսպես, ինք նույնպես բացարձակ խաղաղություն գտաւ իր սրտի համար: Աստվածաշունչի նույնիսկ մի պոկված էջ, կարող է որեւէ մեկին ցույց տալ երջանկության ուղին:

Ծովից ափ նետված Աստվածաշունչը

Կատաղի փոթորկի ընթացքում, Իսպանական ափի մոտ, Գերմանական մի նավ ընկղմվեց: Մի ֆանի օր հետո, ծովը ափ նետեց խորտակված նավից որոշ մասեր, այդ թվում նաև մի Նոր Կտակարան, որի մեջ գրված էր՝ Մարկոս Ռոտմանն, Կոկվեյզե 12, Համբուրգ: Առաջին անգամ կարդացի քոջս՝ Լոտտեի պահանջով: Երկրորդ անգամ կարդացի Աստծո դատաստանից վախենալով: Երրորդ եւ հետագայ բոլոր անգամները կարդացի իմ Փրկիչ Հիսուս Քրիստոսի նկատմամբ ունեցած սիրույս պատճառով:

Դուրս նետված Աստվածաշունչը

«Այդ բանը պատուհանից դուրս նետի՛ր»:

Զինվորները կարող են հանելի ժամանակ անցկացնել, պատմելով ծիծաղաշարժ կատակներ, որոնց վրա ծիծաղում են ամբողջ սրտով, հատկապես երբ դրանք պատմվում են գնաց՝ ֆոլ մանապարհորդելիս:

Մի երիտասարդ գորակոչիկ, նստել էր մի անկյունում ու կարդում իր գրքանի Աստվածաշունչը:

«Մե՞նք այս բարեպաշտ պատանու հետ մի կտակ պետք է անենք, ու նրա Աստվածաշունչը պատուհանից դուրս նետենք»: Ընդամենը մի ֆանի վայրկյան պահանջվեց, որ Աստվածաշունչը շարվեր երկաթուղու գծերի վրա: Ջղայնացե՞լ էր արդե՞տք երիտասարդը: Ո՛չ, նա Տեր ուներ, որ սաել

էր. «...Ես հեզ եմ ու սրտով խոնարհ» (Մատթ. ԺԱ. 29): Նա տխուր էր, բայց լուռ մնաց: Մի քանի օր հետո, մեր երիտասարդ բարեկամը մի ծանրոց ստացավ, որի մեջ իր Աստվածաշունչն էր: Կար նաև մի հետաքրքիր նամակ: Երկաթուղու գծերի մի քանվոր գտել էր Աստվածաշունչը եւ դրա միջոցով լսել Աստծո ձայնը: Նա, իր մեղքերի համար վախեցել էր, բայց Սուրդ Գիրքը կարդալուց հետո նա իսկապես հանդիպեց իր Փրկչին: Զինվորը հիմա հասկացավ, թե նա ինչու պետք էր մի քանի օրով բաժանվեր իր Աստվածաշնչից, եւ ահա նորից պարտվում էր Սատանան:

Հեղված Աստվածաշունչը

Դա Ֆրանսիայում էր: Մի չարչի, մի ընտանիքին որպես նվեր առաջարկեց մի Աստվածաշունչ: Ընտանիքի գլուխը, ընդունեց այն, սակայն անմիջապես Աստվածաշնչից մի տասնյակ էջեր պատռեց ու դրանցով վառեց իր ծխամորեկը: Զարչին հեռացավ հիասթափված:

Մի քանի տարի անց, նա նորից եկավ այս շրջանները եւ հանդիպեց նաև միեւնույն տունը: Պատերազմի ժամանակ այս ընտանիքը մի գավակ էր կորցրել եւ այժմ ստացվել էր նրա ունեցվածքները: Դրանց մեջ էր նաև մի Աստվածաշունչ: Զարչին այն առավ իր ձեռքերի մեջ եւ նանաչեց, որ սա հենց այն էր, որը մի ժամանակ, որպես նվեր, տվել էր այս ընտանիքին, որից էջեր էին պատռվել:

Զոհված զինվորը Աստվածաշնչի ետևում գրել էր հետևյալը՝ «Արհամարհված, ծաղրված բայց վերջում հավատացված: Սրա միջոցով ես փրկվեցի:»

Աստծո Խոսքը ապրում է հավիտյան

Մենք կարիքը չունենք Աստվածաշունչը պաշտպանելու:
Առյուծը ինքն իրեն է պաշտպանում:
Ճիշտ է, Աստվածաշունչը խփում է մարդկանց: Ասում նրանց
թե ինչքան վատ են:
Դրա համար շատ մարդիկ վախենում են նրանից:
Քանի որ Աստծո Խոսքը խփում է մարդկանց խղճերին ու
նրանց անհանգիստ դարձնում, դրա համար էլ նրանք ուզում
են ազատվել նրանից:

Վերցրեք, Աստվածաշունչի դեմ գրված բոլոր գրքերը եւ իրար
վրա դասավորեք, այն ավելի բարձր կլինի քան Վինչեստրի
Կատետրալը: Դրա կողքը դրեք Աստվածաշունչը: Նա անվնաս
է: Նա է հաղթականը ու նա կհաղթի բոլոր թշնամիներին:

ՄԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Ձեռնադրույթ:

Դու ավելի լավ գիտե՞ս:


Դու ասում ես, ես ունեմ ին «ապացույց-ներն» ու «կարծիքները»:

Լավ, այդ պարագային ես մարտահրավեր եմ կանչում:

Այս գրքույկի ետեւում գտնվող հասցեին գրիր հինգ մարդկանց անունները, որոնք քո փաստարկների եւ անբարեպաշտ թեորհանքների միջոցով դարձան երջանիկ մարդիկ, որոնք մի ժամանակ եղել են վատ ու անօգնական իսկ հիմա երջանիկ եւ ուրախ են: Գրած ամեն մի անվան դեմ ես գրելու եմ 10 անուն, ընդամենը 50 մարդկանց անունը, որոնք փոխվել են Աստվածաշնչի միջոցով: Մի ժամանակ նրանք հարբեցող, անարժան եւ անաստված մարդիկ էին, բայց հիմա, նրանք անսահման երջանիկ են, տիրապետելով երկնային հարստությունների, որի համար անբացատրելի ուրախությամբ ցնծում են:

Միլիոնավոր մարդկանց կյանքը արմատապես փոխվել է Աստվածաշնչի միջոցով:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՁԸ ՆՄԱՆ Է



Հացի

«Սա է այն հացը, որ երկնքից կիջնի, որպեսզի եթե մեկը սրանից ուտի, չմեռնի»:


Հովհ.Ջ.50



Կրակի

«Միթե իմ խոսքը կրակի պես չէ՞, ասում է Տերը»:

Երեմիա ԻԳ.29



Մի լույսի

«Բո խոսքը իմ ոտքերիս նրազ է, ու իմ շավիղներին՝ լույս»:

Սաղմ.ՃԺԹ.115



Ոսկուն


«Ցանկալի են նրանք ոսկուն ու շատ փորձված ոսկունք»:

(Սաղմ.ԺԹ.10)

Մի հայելու

«...Բայց նա որ ազատության կատարյալ օրենքին աչք տնկելով կնայի...»:


(Հակոբ․Ա․23-25)



Մի մուրնի

«Միթե իմ Խոսքս...ապանածը կոտրտող մուրնի պես չէ՞»:

(Երեմիա ԻԳ․29)



Կաթի

«Նորածին մանուկների պես բանական ու անարատ կաթին փափափեցե՛ք, որպեսզի դրանով մեծանաք»:

(Ա․Հովհ․Բ․2)



Մղրի

«Մեղրից անուշ են, ու խորիսից կաթած մեղրից»:


(Սաղմ․ ԺԹ․ 10)



Մի սրի

«Հոգու սուրը Աստծո խոսքն է»:


(Եփես․Զ․17)



Ս ե ր մ ի

«Ոչ թե ապականացու սերմից
այլ անապականաուից Աս-
տրծո կենդանի ու հավիտե-
նական խոսքովը»:

(Ա. Պետրոս Ա. 23)



Աստվածաշունչը ասում է

Դու կարող ես ինձ կարդալ յոթ անգամ
Կամ յոթանասուն անգամ յոթը
Ու այնուամենայնիվ, քո միտքը չկարողանա
պատկերացնել երկնից իմ տված ամբողջականու-
թյունը:

Ինչքան ավելի փնտոնես,
 Այնքան ավելին կգտնես,
 Ինչքան ավելի կարդաս,
 Այնքան ավելի կսովորես Աստծո սիրող միտքը:
 Զ. Կատց.

Իմ Նամակը

Աստվածաշունչը նման է նամակի՝ խիստ անհատական գրված է Ինձ համար:
 Բոլոր զգուշացումները հասցեագրված են Ինձ:
 Հիսուս Քրիստոս Ինձ համար մեռավ:
 Նա անհատական փրկություն է առաջարկում Ինձ:
 Եթե ես ուզում եմ դրախտ գնալ, ես պետք է
 Նրան ընդունեմ որպես Իմ անհատական Փրկիչը:

Նրան Խոսքից Բռնացրու

Արեւելյան մի իշխանի հպատակը մահվան էր դատապարտված: Մահապատիժից, որին ներկա էր նաեւ իշխանը, անմիջապես առաջ դատապարտյալին հարցրեցին իր վերջին ցանկության մասին:

Միակ բանը, որ ցանկացավ, մի գավաթ ջուր էր, որը նրան տրվեց, սակայն նա այնքան էր վրդովված, որ դողացող ձեռքերով հագիվ կարողացավ գավաթը բռնել:

Իշխանը նրան ասաց. «Հանգստացի՛ր, քո կյանքը ապահով է մինչև ջրի վերջին կաթիլը խմելդ»: Նա իշխանին անմիջապես իր խոսքից բռնացնելով, ջուրը ամբողջությամբ թափեց գետին, այնպես որ ոչ ոք չէր կարող այն նորից գավաթի մեջ լցնել: Նրա կյանքը փրկված էր:

Այսպես, ամեն մարդ կարող է Աստծուն իր խոսքից բռնացնել: Սակայն մենք Աստծո խոսքի նկատմամբ ավելի մեծ վստահությու՜ն ունենք քան որեւէ թագավորի:

Անըմբռնելի՞

«Աստվածաշունչը ինձ համար ոչինչ է», ասաց Պետեր իր ընկերոջը, «այնտեղ այնքան բան կա, որ ես չեմ կարող հասկանալ»:

Ջոնը, մի պահ տրամաբանեց: Նա լավ գիտեր, որ Պետերը պարզապես իրեն արդարացնելու միջոց էր փնտռում:

Դեռ երեկ, Պետերը պարտեզից մի ֆանի խնձոր էր գողացել: Դրա համար Ջոն պատասխանեց. «Աստվածաշնչում գրված մի բան դու լավ ես հասկանում»:

«Լավ, դա ո՞րն է»:

«Գողություն մի անի»

Սա մի նետի պես խրվեց Պետերի սրտին: Նա խնձորենիների մասին հիշեց ու լուռությամբ հեռացավ:

Ամենափոքր Աստվածաշունչը

Հայտնի ամենափոքր Աստվածաշնչի երկարությունը մի լուցկու շյուղի երկարության է, այսինքն $1\frac{3}{4}$ մատնաչափ երկար, $1\frac{1}{4}$ մատնաչափ լայն եւ 13/16 մատնաչափ հաստ: Փոփրիկ այս գիրքը տպագրվել է Անգլիայում եւ ունի 878 էջ: Այն պարունակում է նաեւ շատ նկարներ:

Խոշորացույցի միջոցով նրա տառերը հեշտությամբ կարելի է ընթերցել: Այս Աստվածաշունչը կշռում է ընդամենը 20 գրամ՝ այս գրքոյկի ֆաշի կեսից անգամ պակաս:

Նրանք, ովքեր չեն աղոթում...

Մի գյուղացի հրավիրված էր մի բանկետի: Նա սեղան էր նստել ակամավոր հյուրերի հետ: Ուտելուց առաջ, ոչ ոք չաղոթեց, բացի գյուղացուց, որը ձեռքերը հագցրեց իրար ու լուսնամբ գոհունակություն հայտնեց Երկնավոր Հորը: Քաղաքից եկած մի ինքնահավան, ծաղրելով նրան ասաց. «Սիրելի բարեկամ, այնտեղ, գյուղում, դուք բոլորդ դեռ աղոթելու սովորություն ունե՞ք»:

«Ո՛չ», պատասխանեց գյուղացին, «Այդպես ասել չեմ կարող»:

«Լավ,», հաղթականորեն ասաց ֆաղաֆացին, «միգուցե միայն ծերունիները կամ հետամնացները»:

«Այդպես էլ չի կարելի ասել», եղավ պատասխանը, «Տեսե՛ք, իմ ախոռում ես մի խոզ ունեմ իր 7 ծծկերներով եւ նրանք չեն աղոթում: Բացի կենդանիներից, սովորաբար բոլորը գոհանում են Աստծուց իրենց տրված սննդի ու ջրի համար»: Սրանից հետո ֆաղաֆացին լռեց:

Հրահանգներ

Խորհուրդ է տրվում Աստվածաշունչը միշտ հետդ տանել, որպեսզի հնարավոր լինի այն կարողալ ամեն հնարավորությունն ու առիթը ներկայանալու դեպքում:

Գործք Առ. Ը.28, Եփես. Ե.16

Բայց ինչպե՞ս պետք է կարդամ Աստվածաշունչը:

Ահա մի քանի առաջարկություններ նրանց՝ ովքեր ուզում են Աստվածաշունչը կարդալ ուրախությամբ ու իրենց հոգու օգտի համար:

Առաջին. կարդա՛ Աստվածաշունչը:

Ապա պահպանիր հետեւյալ կանոնները՝

1. Ունեցիր մի պարզ տպագրված Աստվածաշունչ:
2. Ամեն օր քննիր ժամ Աստծո հետ լուռ առանձնանալու ժամանակ տրամադրիր: Օրը ունի 96 քննիր ժամեր (15 րոպե), դրանց մեկը տրամադրիր Աստծուն: (Կարն ժամանակ անց, հավանաբար դու կարիք ունենաս քննիր ժամից ավելի ժամանակի):

Գործք. ԺԷ. 11

3. Կարեւոր չէ, թե օրվա որ ժամանակն ես ընտրում: Վաղ առավոտը կամ երեկոն ամենահարմար

ժամանակն է: Առավոտյան միտքը ավելի ընդունակ է ըմբռնելու:

Սաղմոս Գ. 5, Դ. 8

4. Աստվածաշունչդ կարդա ուշադիր, առանձնապես: Էջերի միջով մի սլացիր, այլ խորհրդածիր քո կարդացածի մասին:

5. Ընթերցելիս, աղոթիր Աստծուն, որ Նա քեզ լուսավորի: Ոչ ոք Աստվածաշունչը այնպես չի կարող քացատրել, ինչ Նա ով գրել է այն:

Մաթ. ԺԱ. 25

6. Ընթերցելիս, Աստված թող սրտիդ խոսի: Կարդա այնպես, կարծես այն գրված է հատկապես քեզ համար: Այն Աստծո պատգամն է Քեզ ուղղված: Եթե զգուշացումներ կան, պետք է մտածես, որ դրանք ինձ համար են: Եթե խոստումներ կան, կարող ես մտածել, որ դրանք իմ լավի համար են:

Գաղաթ. Բ. 20

7. Լավ է մատիտ կամ գրիչ ունենալ ձեռքի տակ, ընդգծելու համար այն տողերը որոնք հավանում ես: Սա հնարավոր կդարձնի հաջորդ անգամ այն հեշտությամբ գտնելը: Նշիր նույնպես այն բառերը, որոնք ավելի համալս են հանդիպում, ինչպիսիք են՝ մեղք, ներում, խաչը, ապաշխարություն, Աստծո սերը, եւայլն:

8. Ընթերցման ավարտից հետո, այն Աստծո հետ փննարկիր աղոթքի միջոցով:

9. Ամեն անգամ մի հատված կարդալով, կանո-

նավոր կերպով շարունակիր կարդալ ամբողջ Աստվածաշունչը: Երբ ավարտեցիր ամբողջ Աստվածաշնչի ընթերցումը, այն նորից սկսիր սկզբից: Ամեն անգամին այն քերականական համար ավելի գեղեցիկ կդառնա:

10. Անգիր սովորիր այն հատվածները, որոնք քերականական համար կարեւորություն ունեն: Այսպես անելով, գալիք օրերի համար անթիւ օրհնութիւններ պիտի ստանաս:

Սաղմոս ՃԺԹ. 11



Բացի՛ր Աստվածաշունչդ

Եթե խաղաղություն ես ուզում - Հոով.Ե.: եւ
Բ. Հովհ. ԺԴ.

Եթե ամեն ինչ ընթանում է քո ցանկության հա-
մաձայն - Սաղմ. ԼԳ. Ա., Տիմ. Զ., Հակոբի Բ. 1-17:

Եթե սկսում ես մի նոր աշխատանք - Սաղմոս Ա.,
Առակաց ԺԶ:

Եթե ուզում ես մարդկանց հետ համերաշխ ապ-
րել - Հոով. ԺԲ:

Եթե մտահոգվում ես ընտանիքիդ անդամների
համար - Սաղմ. ՃԻԱ, Եսայի Խ:

Եթե վհատվել ես - Սաղմոս ԻԳ, ԽԲ, ԽԳ:

Եթե դժվարությունները ավելանում են - Բ. Տիմ.
Գ., Եբրայ. ԺԳ:

Եթե բարեկամներդ լքել են քեզ - Մաթ. Ե.,
Ա. Կորնթ. ԺԳ:

Եթե փորձություններ են գալիս - Սաղմոս ԺԵ,
ԺԲ, ՃԼԹ, Մաթ. Դ., Հակոբ. Ա.:

Եթե քեզ ամեն ինչ շատ է թվում - Սաղմոս
ԼԴ., ՀԱ:

Եթե չես կարողանում քնել - Սաղմոս Դ., ԾԳ.,
ՃԼ:

Եթե կոպել ես - Մաթ. ԺԸ., Եփես. Դ.,
Հակոբ Դ:

Եթե հոգնած ես - Սաղմոս ՀԵ.1-7, Մաթ. ԺԱ,
28-30:

Եթե ներում ես խնդրում - Ղուկ. ԺԵ., Փիլիմոն:
Եթե հիվանդ ես կամ ցավի մեջ - Սաղմոս Զ.,
ԼԹ., ԽԱ., ԿԷ., Եսայի ԻԶ:

Եթե հավատքի թուլացել է - Սաղմ. ՃԻԶ, ՃԽԶ,
Երբայ. ԺԱ.:

Եթե քեզ թվա, թե Աստված շատ հեռու է - Սաղմ.
ԻԵ., ՃԻԵ., ՃԼԸ., Ղուկ. 10:

Եթե զգաս, որ մեռակ ես ու անապահով - Սաղմ.
ԻԷ., ՂԱ., Ղուկ. Ը:

Եթե վախենում ես մահից - Հովհ. ԺԱ., ԺԷ., Ի.,
Բ. Կորնթ. Ե:

Եթե մեղք ես գործել - Սաղմ. ԾԱ., Եսայի ԾԳ.,
Հովհ. Գ., Ա. Հովհ. Ա:

Աշխարհի մեծագոյն գանձերից է՝

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ, ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ:

«Սակայն այս բոլորը գրվեցին, որպեսզի հավատաք, թե Հիսուսը Քրիստոսն է, Աստծո Որդին, ու որպեսզի հավատալով կյանք ունենաք նրա անունովը»:

Հովհ. Ի. 31

**ՄԵԿԸ ՔԵՁ ՆԱՄԱԿ Է ԳՐԵԼ ԵՒ ՍՊԱՍՈՒՄ Է
ՔՈ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ:**

Եթե ուզում ես վստահ լինել մեղքերիդ թողության համար եւ Աստծո նամակի բովանդակության մասին հարցերի մասին օգնության կարիք ունես, կամ ցանկություն ունես այս գրքույկը բաժանելու, դու կարող ես գրել ներքոյիշյալ հասցեներից որեւէ մեկին՝

**ՈՒԻԼՀԵԼՄ ՈՒԵԼԲԵՐ
ՖՐՈՆՀՆՀՈՍԵՆ**



GBV Dillenburg GmbH

Eiershäuser Str. 54

35713 Eschenburg

Germany

www.gbv-dillenburg.de

